



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՓԵՏՐՈՒԱՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 36

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻԻՆՆԸ

Տէր, *բու սէրդ երկինքին պէս անսահման է. հաւատարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի: Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է, դատաստաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ: Դո՛ւն է որ կը հոգասմարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր: Ինչ թանկագին է հոգածութիւնդ, ո՛վ Աստուած. բոլոր մարդիկ բու թելերուդ հովանիին կ'ապաւինին: Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհներու բու գետէդ խմել կու տաս դուն անոնց: Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը. լոյսովդ է որ մենք լոյսը կը տեսնենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք թեզ կը նանչնան, եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են:*

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՐԹՔ

ԲԱՆ 2Թ

Աստուած եւ Տէր, կեանք եւ արարիչ, ողորմած, գթած, լոյս, ներողամիտ, անոխակալ, մարդասէր, ամենագութ, պարգեւաբու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, դարան ամրութեան, պարսպարան վարահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաղիք մեղքերու, բուժիչ վերքերու, անհասանելիներու հնարք, անմաքսելիներու՝ մերձաւոր, անյուսութեան ելք, անունդ խոստովանուած՝ Աստուծոյ Որդի, եւ քեզի հետը հզօր եւ ահաւոր Հօրդ եւ քեզի հետը երկրպագելի ամենակալ Սուրբ Հոգիին փառք եւ գոհութիւն, յաւիտեանս. ամէն:

ՕՐՈՒԿԱՆ ՆԻԻԹԸ

ԾՆՆԴՈՑ 2:1-25



Աստուած իր բոլոր գործերը եօթներորդ օրը լմնցուց ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն: Աստուած ոչ միայն սրեղծագործեց ու փակաւին կը սրեղծագործէ, այլ նաեւ՝ կը նախախնամէ: Նախախնամութիւն կը նշանակէ սրեղծագործութեամբ զբաղիլ, զայն հոգածութեան, ուշադրութեան եւ գորգորանքի առարկայ դարձնել: «*Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ*» (Յովի 5:17): 7րդ օրը աւարտեց կարելի է հասկնալ միայն սրեղծագործութեան կապուած, որմէ յետոյ կը սկսի նախախնամութեան աշխատանքը, որ երբեք ալ դադար չունի:

Այս հանգիստը նաեւ խորհրդանիշ է զալիք այն յաւիտենական հանգիստին, որ Աստուած խոստացած է փալ բոլոր անոնց որոնք հաւատարմութեամբ կը կատարեն Իր կամքը: Նաեւ այն հանգիստը որ Յիսուս Քրիստոս իր բոլոր փրկագործական գործերէն հանգստացաւ, եւ եօթներորդ օրն էր որ թաղուեցաւ, ու Անոր յարութիւնը նոր օրուան սկզբնաւորութիւնը պիտի խորհրդանշէր:

Աստուած եօթներորդ օրը օրհնեց ու սրբեց զանիկա: «Սրբել» կը նշանակէ անջատել, Աստուծոյ յարկացնել, նուիրագործել: Ուրեմն Աստուած 7-րդ օրուան յարուկ օրհնութիւն փուաւ եւ միաժամանակ ձեռով մըն ալ անջատեց միւս օրերէն, ըսելու համար, որ այդ օրը իր իմաստով, գործածութեամբ եւ նպատակով փարբեր է ու պէտք է ըլլայ միւս օրերէն, եւ Աստուծոյ յարկացուած պէտք է ըլլայ:

Գեպինը գործելու մարդ չկար: Այս համարը հետաքրքրականօրէն ցոյց կու տայ մարդուն պարտականութիւնը, եւ աւելի ճիշդ փրորութիւնը: Մարդը իր աշխատանքով է որ փրորութիւն պիտի ընէ: Առանց գործելու ու պահելու, փրորութիւն զի կրնար ընել: Տիրութիւնը ծառայութիւն է: Ինչպէս կ'ըսուի, մարդը իր փան ծառան է: Հետեւաբար, Աստուած ալ մարդը սրեղծեց որպէսզի գործէ ու պահէ աշխարհը եւ ոչ թէ փճացնէ, ինչպէս Ինք՝ Աստուած ոչ իայն սրեղծեց այլ նաեւ կը նախախնամէ:

Աստուած գեպինն հողէն շինեց մարդը եւ անոր ընգունքներէն կենդանութեան շունչ փչեց ու մարդը կենդանի հոգի եղաւ: Այս հատուածը ցոյց կու տայ երկու առանձնայարկութիւններ կապուած մարդուն:

1. Մարդուն հողեղէն ըլլալը:
2. Ի փարբերութիւն միւս արարածներէն, կենդանիներէն, Աստուած մարդուն կեանքի շունչ փչեց, եւ մարդը եղաւ կենդանի հոգի:

Ուրեմն մարդը հող է եւ հոգի: Առաջինը կը կապէ աշխարհին, իսկ երկրորդը՝ հոգեղէն, հաղորդակցութեան միջոց կապուելու Աստուծոյ հետ:

Աստուած երկրի արեւելեան կողմը Եդեմի պարտեզը փնկեց եւ իր շինած մարդը հոն դրաւ: Նախ արեւելեան կողմը նկարի պէտք է ունենանք հեղինակին կողմէ դիտուած արեւելեան կողմը, եւ միւս կողմէ այն չորս գետերը, որոնք կու գան ցոյց փալու թէ այդ վայրը աշխարհագրական իմաստով կարելի է առնել որպէս Հայաստանի աշխարհը: Հայաստան երկիր դրախտավայր: Այս բոլորով հանդերձ, սակայն, Աստուած շատ աւելի հոգեւոր ճշմարտութիւն մըն է որ կ'ուզէ ցոյց տալ: Այլ խօսքով, վիճակի մը մասին է խօսքը, ինչ որ մարդը կորսնցուց եւ այդ վիճակէն դուրս դրուեցաւ իր անհնազադութեան պատճառով: Աստուած մարդը դրաւ Եդեմի պարտեզին մէջ որպէսզի գործէ եւ պահէ, եւ այդ բոլորը աստուածային օրհնութեամբ: Իսկ Եդեմէն դուրս նաեւ մարդը շարունակեց գործել, բայց այս անգամ ճակրի քրտինքով իր կերակուրը վաստակելու:

Կենաց ծառ, բարիի ու չարի գիտութեան ծառ: Աստուած դրախտին կեդրոնը դրաւ երկու ծառեր, որոնք փարբեր են իրարմէ: Այսպէղ կարելի է առնել, որպէս հնազանդութեան եւ անհնազանդութեան ծառեր: Աստուծոյ խօսքին հնազանդութիւնն ու անհնազանդութիւնը:

Աստուած պատուիրեց մարդուն ըսելով. «Պարտեզին բոլոր ծառերէն համարձակ կեր, բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր. քանզի այն օրը որ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս»: Փորձառութիւնը ինքնին անհնազանդութիւն չէր, բայց վերածուեցաւ անհնազանդութեան, որովհետեւ զինք Աստուծոյ խօսքէն եւ հրամաններէն դուրս պիտի բերէր եւ պատճառ պիտի ըլլար մահուան:

Ներսէս Ծնորհալի կ'ըսէ, թէ Դրախտին մէջ գտնուող ծառը սովորական էր, երբ մարդը անկէ ճաշակեց անհնազանդութեան ոգիով մահուան պատճառ դարձաւ: Այսպէս կարելի է առնել, երբ որեւէ պրորղ կ'ուզենք ճաշակել ժամանակէն առաջ, ան կրնայ անհնազադութիւն պատճառել: Աստուած երկու սկզբունք փուաւ մարդուն՝ կամ Իր կամքին համաձայն ապրելու, կամ ալ՝ հակառակ, եւ ուստի մարդուն վերաբերումն էր, որ պատճառ դարձաւ անոր անկման, առանց համբերելու եւ հնազանդելու:

Աստուած ճիշդ է մարդուն ազատութիւն փուաւ, բայց նաեւ անոր կեանքին ուղին ճշդելու համար օրէնքներ սահմանեց, առանց սակայն սահմանափակելու անոր ազատութիւնը: Պէտք է գգուշ ըլլալ, որ ազատութիւնը երկասայրի սուր է, թէեւ ամենէն գեղեցիկ բանն է, բայց նաեւ չարիքի պատճառ կրնայ դառնալ, որովհետեւ ազատութիւն կը նշանակէ ընտրութիւն: Ազատութեամբ ընտրել կամ բարին կամ չարը:

Որովհետև մարդը փորձառութեամբ սորվող արարած մըն է, հետեւաբար սկիզբէն չի ճանչնար բարին եւ չարը: Ուստի երբ Աստուած պարտիրեց մարդուն չմօտենալ ծառին, որովհետև անկա ղեպի մահ կ'առաջնորդէ, եւ սակայն մարդը ուզեց փորձառութեամբ սորվիլ, եւ ենթարկուեցաւ մահուան: Աստուած ֆիզիքական մահ սահմանեց մարդուն, սակայն մարդը անմիջապէս չմեռաւ, այլ դարձաւ մահկանացու: Թեպէտ Աստուած թոյլարբեց անոր ֆիզիքական մահը, բայց չուզեց անոր հոգեկան մահը, որովհետև մեղքը նաեւ հոգեկան մահուան կ'առաջնորդէ, որովհետև մարդուն սրտէջծեց պահելու համար:

Ուրեմն մարդը ունի մահկանացու մարմին եւ անմահ ոգի մը: Միայն ֆիզիքական մահուամբ է որ անոնք իրարմէ կը բաժնուին, բայց Աստուծոյ կամքն է, որ դարձեալ մարդը ըլլայ միշտ իր սրտէջծածին պէս: Այդ մէկը րեղի պիտի ունենայ աւարտին:

Գազաններն ու երկինքի բոլոր թռչունները հողէն շինեց եւ Ադամին առջեւ բերաւ, որպէս զի րեսնէ թէ անոնց ինչ անուն պիտի դնէ: Այս հաստատումը կ'ուզէ ըսել, որ Աստուած բոլոր անասունները Ադամի րրամատրութեան րակ դրաւ: Միւս կողմէ բանի մը անունը րալ կը նշանակէ իշխանութիւն ունենալ անոր վրայ:

Աղէկ չէ որ Ադամ միմակ մնայ. անոր օգնական մը ընեմ իրեն յարմար: Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ Ադամին վրայ ու անկա քնացաւ: Անոր կողին ոսկորէն մէկը առաւ ու անոր րեղը միւ լեցուց: Ինչպէս կենդանիներու պարագային, այնպէս ալ մարդու պարագային իր րեսակին պէս, որպէս իրեն օգնական: Խորունկ քուն մը բերաւ, որ կը նշանակէ խորհուրդ մըն է ամբողջ սրտէջծագործութիւնը, առաւել եւս մարդու սրտէջծագործութիւնը: Միւս կողմէ, Աստուծոյ կողմէ է որ կը րրուի, եւ ոչ թէ մարդուն կողմէ կը խնդրուի: Տակաւին, կայ այն ապագայ պարկերացումը, ինչպէս որ Ադամի կողէն կինը պիտի սրտէջծուէր, նոյնպէս ալ Քրիստոսի կողէն Եկեղեցին:

Կողի ոսկորէն բացաբրութիւնը ցոյց կու րայ անոնց հաւասարութիւնը, միեւնոյն ժամանակ կողը, րարին, կուրծքին մօրիկ մաս մը, որ կը նշանակէ մարդուն րրակից, կողակից. մէկը որ կրնայ հասկնալ, հաղորդակից ու բաժնեկից դառնալ Ադամին զգացումներուն, մրածումներուն, հոգեմրատոր ներաշխարհին:

Ադամ ըսաւ. «Ասկա ոսկորես ոսկոր ու մարմինես մարմին է. ասկա Կին կոչուի, քանզի իր այրէն առնուեցաւ»: Կը նշանակէ ազգակից, հարագալ: (Ծննդ 29:14): **Անոր համար այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան:** Հերաբրքրական է, որ րակաին հայր ու մայր գոյութիւն չունին, բայց արդէն իսկ արաբայաբութիւնը կայ: Այս արաբայաբութիւնը նկարի ունի ապագայ իրողութիւն մը: Այս պարագային կը նշանակէ նոր ընրանիքի մը կազմութեան մասին է խօսքը: Որովհետև այնքան արեն որ ամուսնացած չէ, կը նշանակէ հոր ընրանիքին մաս կը կազմէ, իսկ երբ ամուսնանայ նոր ընրանիք է որ կազմուի:

Մէկ մարմին պիտի ըլլան կը նշանակէ համերաշխ, ներդաշնակ եւ համագործակից իրարու: Իսկ հոն ուր որ երկուութիւն կայ, կը նշանակէ հոն բաժանում կայ, իսկ հոն ուր բաժանում կայ հոն արդէն կործանում է որ կը րիրէ: Իսկ այս արաբայաբութիւնը արդէն Աստուծոյ կամքն է որ կը յայրնէ, որտեղ ընրանիքըայս երկրի վրայ դասարհարակութեան եւ պարասարութեան հանգրուան մըն է Աստուծոյ ընրանիքին մաս կազմելու:

Ադամ ու իր կինը երկուքն ալ մերկ էին ու չէին ամչնար: Նախ պէրբ է ճշղել, որ 2-րդ եւ 3-րդ գլուխներուն մէջ յիշուած մերկ կամ մերկութիւն բառերը րարբեր իմաստներ ունին:

Այսպեղ յիշուած մերկութիւնը մարմնական մերկութեան մասին է: Աստուած մարդս սրտէջծեց, եւ մարդը այդպէս ալ կը ծնի մերկ: Ամօթը սակայն մերկութեան հետ ի'նչ կապ ունի, եւ ինչո'ւ ամօթ չէին զգար: Մարմնական մերկութիւնը այսօր ամօթի պարճառ է՝ թէ ո'չ:

Աստուած երբ մարդը սրտէջծեց, սրտէջծեց ամբողջ բարութեամբ: Նաեւ մարդը ծածկուած էր աստուածային փառքով: Այս փառքը երբոր կորսնցուց մերկութեան ամօթը սկսաւ զգալ: Ուրեմն, մարդուն մերկութեան մէջ ամչնալիք բան մը չկայ: Մարդը իր մարմինը պէրբ է գնահալրէ իրեն աստուածային բարիք: Մարդուն մրքին մէջ երբեք ալ չկար ամօթի գաղափարը: Որքան արեն որ չարը գոյութիւն չունէր մարդուն մէջ, նաեւ այր եւ կնոջ յարաբերութեան մէջ, այնքան արեն ամօթի խնդիր չկար: Այսօր եթէ երբեք կ'ամչնանք, որոհետև փոխուած է մեր հայեացքը: Հետեւաբար, մարմնի մերկութիւնը չէ ամօթի պարճառը, այլ մրածողութիւնը:

ԱՂՈԹԸ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ եւ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ եւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*